



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ

### Հ Ր Ա Մ Ա Ն

« 02 » մարտի 2015 թ.

N 11

ք. Ստեփանակերտ

#### **Լեռնային Ղարաքաղի Հանրապետության Գլխավոր դատախազի և տեղակալների միջև աշխատանքի բաժանում կատարելու մասին**

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Լեռնային Ղարաքաղի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 28-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաքաղի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի համաձայն՝

### Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

Լեռնային Ղարաքաղի Հանրապետության գլխավոր դատախազի և տեղակալների միջև կատարել աշխատանքի հետևյալ բաժանումը.

1.1. Վերցնում եմ Լեռնային Ղարաքաղի Հանրապետության դատախազության ընդհանուր ղեկավարումը, կոլեգիայի աշխատանքի կազմակերպումը և ղեկավարումը, Լեռնային Ղարաքաղի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպավերահսկողական, վերլուծության, վիճակագրության, իրավական ապահովման, միջազգային կապերի և անձնակազմի հարցերով բաժնի, ԼՂՀ գլխավոր դատախազության հատուկ քննչական բաժնի աշխատանքների կազմակերպումն ու համակարգումը, տվյալ բաժնի և ԼՂՀ ԿԱ ազգային անվտանգության մարմինների կողմից քննվող քրեական գործերի նկատմամբ դատավարական ղեկավարումն ու հսկողությունը իրականացնող գլխավոր դատախազության ավագ դատախազի աշխատանքի կազմակերպումն ու վերահսկողությունը, ԼՂՀ դատախազության աշխատակազմի կառավարումը.

1.2 Լեռնային Ղարաքաղի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Ա.Գ.Ավագյան.

ԼՂՀ Գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության բաժնի աշխատանքների կազմակերպումն ու

համակարգումը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումն ու ղեկավարումը:

1.3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Ս.Վ.Հակոբյան.

ԼՂՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնի, մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման բաժնի աշխատանքների կազմակերպումը և համակարգումը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումն ու ղեկավարումը:

1.4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Ս.Յու.Ստեփանյան.

ԼՂՀ Գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի աշխատանքի կազմակերպումն ու վերահսկողությունը, ԼՂՀ Գլխավոր դատախազության կոռուպցիոն, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով բաժնի աշխատանքների կազմակերպումն ու համակարգումը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության աշխատակազմում պետական ծառայության թափուր պաշտոնների զբաղեցման համար մրցույթային հանձնաժողովի աշխատանքների կազմակերպումն ու ղեկավարումը:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազի 2013 թվականի ապրելի 29-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազի և տեղակալների միջև աշխատանքի բաժանում կատարելու մասին» թիվ 06 հրամանը:

3. Հրամանն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազին ու դատախազին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխավոր դատախազության բաժինների պետերին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքապետախազներին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատախազության աշխատակազմի ղեկավարին:

4. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Արդարադատության երրորդ դասի  
պետական խորհրդական**

**Ա.Ա.Մոսիյան**